

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների եւ տնօրենների վերապատրաստման նպատակով մասնագիտական զարգացման կարիքների գնահատման հետազոտություն

Հետազոտության արդյունքներ և եզրակացություններ

Հակոբ Մաթևոսյան, «Այ Փի Էս Մի» Քաղաքական և
սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ

28 մարտի, 2011թ.

Մեթոդաբանություն

Քանակական հարցման մեթոդաբանությունը

- Ձեւայնացված հարցազրույցներ Երեւանի, Արմավիրի, Գեղարքունիքի և Շիրակի 79 դպրոցների 1050 ուսուցիչների հետ, որոնցից.
 - 480 ուսուցիչ՝ Երեւանի 27 դպրոցից,
 - 185 ուսուցիչ՝ Արմավիրի մարզի 15 դպրոցից,
 - 185 ուսուցիչ՝ Գեղարքունիքի մարզի 16 դպրոցից,
 - 200 ուսուցիչ՝ Շիրակի մարզի 21 դպրոցից:
- Հետազոտության համար կիրառվել է բազմաստիճան ընտրանք՝ տվյալների $\alpha=90\%$ ճշտությամբ:
- Սահմանային սխալի գործակիցը՝ $\Delta=\pm 3\%$
- Դաշտային փուլ՝ դեկտեմբերի 6-14, 2010թ.
- Որակի ստուգում՝ 48.2%

Որակական հետազոտության մեթոդաբանությունը

Որակական հետազոտության ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. Խորին հարցազրույց

Թվով 79 հարցազրույց Երևանի, Արմավիրի, Գեղարքունիքի և Շիրակի ընտրված դպրոցների տնօրենների հետ

2. Փորձագիտական հարցազրույց

Թվով 20 հարցազրույց կրթության ոլորտի առաջատար հաստատությունների փորձագետների հետ

3. Ֆոկուս խումբ


Թվով երեք ֆոկուս խմբային քննարկումներ հետազոտության դաշրային աշխատանքներից առաջ և երեք ֆոկուս խմբային քննարկումներ հետազոտության նախնական հաշվետվության ավարտից հետո

ՄԱՍ 1

1. Ուսուցիչների սոցիալ- ժողովրդագրական բնութագրիչները


Ուսուցիչների ժողովրդագրական բաշխումն ըստ սեռի

Հարցվողների սեռային բաշխումը (%-ով)




Ուսուցիչների ժողովրդագրական բաշխումն ըստ տարիքի


Հարցվողների տարիքային բաշխումը (%-ով)



Հարցվողների ժողովրդագրական բաշխումն ըստ կրթական աստիճանի

Կրթական աստիճան






2. Ուսուցչի շարունակական մասնագիտական զարգացման եւ դպրոցի բարելավման գործընթացը

Ուսուցիչների տեղեկացվածությունը հանրակրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների մասին

Ուսուցիչների տեղեկացվածությունը հանրակրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների մասին




Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների մասին տեղեկացվածության հիմնական աղբյուրները

№	Տեղեկացվածության աղբյուր	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Դպրոցի տնօրինություն	69.9
2	Վերապատրաստման դասընթացներ	59.5
3	Հեռուստատեսություն, մամուլ	41.6
4	Մեթոդ-միավորման հանդիպումներ	37.3
5	Կրթական ինտերնետ կայքեր	25.9
6	Մասնագիտական թերթեր, ամսագրեր	24.0
7	Գործընկերներ, այլ մանկավարժներ	15.0
8	Մեթոդական ձեռնարկներ	10.7

Ուսուցիչների մասնակցությունը մասնագիտական վերապատրաստման դասընթացներին վերջին հինգ տարիների ընթացքում

Մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին



- Մասնակցել է վերապատրաստման դասընթացների
- Չի մասնակցել որևէ վերապատրաստման դասընթացի

Դասընթացների թեմաները, որոնց մասնակցել են ուսուցիչները - 1

№	Դասընթացներ	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Դասավանդման նոր մեթոդի կիրառում, ուսումնասիրում	57.5
2	Գնահատման նոր մեթոդներ	41.3
3	Դասավանդվող առարկայի վերապատրաստում	38.4
4	Ավագ դպրոցին առնչվող բարեփոխումներ, նորամուծություններ	15.0
5	Դասագրքերի, ծրագրային նյութերի ներկայացում	13.7
6	Ծրագրային փոփոխությունների մասին իրազեկում	11.1
7	Կրթական բարեփոխումներ	9.4
8	ՏՀՏ, համակարգչային դասընթացներ	9.2
9	Առաջին բուժօգնությունն եւ քաղաքաշտպանություն	4.6


Դասընթացների թեմաները, որոնց մասնակցել են ուսուցիչները - 2

№	Դասընթացներ	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
10	Առողջ ապրելակերպ	4.4
11	Նոր դասավանդվող առարկայի վերապատրաստում	4.3
12	Տարրական դպրոցին առնչվող բարեփոխումներ, նորամուծություններ	4.2
13	Ինտերակտիվ մեթոդներով, պաստառների, պրեզենտացիաների միջոցով դասավանդման հմտություններ	3.6
14	Դասավանդման պլանի կազմում	1.5
15	Վեց տարեկան երեխաների դասավանդման հմտություններ	1.5
16	Դասղեկի վերապատրաստում	1.5
17	Պայքար թրաֆիքինգի դեմ	1.1
18	Պայքար կաշառակերության դեմ	1.0


Կազմակերպություններ, որոնք անցկացրել են դասընթացները ուսուցիչների համար

№	Կազմակերպություններ	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Կրթության ազգային ինստիտուտ	80.1
2	Դպրոց	53.1
3	Կրթության եւ գիտության նախարարություն	17.4
4	Գնահատման թեսթային կենտրոն	13.2
5	Կատարելագործման ինստիտուտ	10.2
6	ԾԻԳ	9.0
7	Հայաստանի պետական մանկավարժական համալսարան	6.7
8	Հեղինակներ, անհատներ	5.2
9	Վերապատրաստման ինստիտուտ	5.0
10	Բարեփոխումների ինստիտուտ	3.1
11	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Արարատյան հայարպետական թեմ, հայ առաքելական եկեղեցի	3.0


Վերապատրաստման դասընթացների ընթացքում ստացած գիտելիքների օգտակարությունը մասնագիտական եւ նորարարական տեսանկյուններից



Վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը - 1




Վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը - 2




Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքների զարգացման պայմանները դպրոցում

Գիտելիքների զարգացման պայմանները դպրոցում



Նախկինում վերապատրաստման դասընթացների հետ կապված ուսուցիչների դժվարությունները


№	Դժվարություններ	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Ժամանակային գործոն (ժամանակի սղություն, ուշ ժամ)	11.3
2	Հեռավորության գործոն (տեղ հասնելու դժվարություն)	8.0
3	Անձնական խնդիրներ (առողջական, ճանապարհաճախսի եւ այլն)	3.2
4	Նյութերի խրթին, ոչ մատչելի մատուցում, դասընթացի անարդյունավետություն	2.3
5	Պրակտիկ, գործնական դասերի բացակայություն	1.3
6	Դասընթացին տրամադրվող ժամանակահատվածի սղություն	0.9
7	Դասընթացի երկարատևությունը	0.7
8	Դասընթացի, թեմատիկ նյութերի սակավություն, բացակայություն	0.5
9	Դասավանդողների փորձի բացակայություն, ոչ կոմպետենտություն	0.4
10	Նոր մեթոդներին ընտելանալու դժվարություն	0.4
11	Ոչ մի դժվարություն	74.7



3. Ուսուցիչների վերապատրաստման հիմնական կարիքները

Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցելու ցանկությունը


Վերապատրաստման դասընթացների մասնակցելու ցանկությունը




- Դասընթացների կարիք ընդհանրապես չի զգում
- Դասընթացների կարիք զգում է՝ սակայն կան խոչընդոտներ
- Ցանկանում է մասնակցել եւ որեւէ խոչընդոտ չեմ տեսնում

Ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացների մասնակցության նախընտրելի ամիսները


Վերապատրաստման դասընթացների նախընտրելի ամիսները



Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նախընտրելի հաճախականությունը




Դասընթացների նախընտրելի տեւողությունը



Դասընթացների նախընտրելի ժամերը

Դասընթացների մասնակցության նախընտրելի ժամերը



Գիտելիքներ եւ հմտություններ, որոնք կցանկանային ստանալ ուսուցիչները մասնագիտական վերապատրաստման ընթացքում - 1

№	Գիտելիքներ եւ հմտություններ	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Նոր մեթոդներ, հմտություններ	26.9
2	Մասնագիտական գիտելիքների ընդլայնում	21.8
3	Նոր մեթոդների կիրառման հմտություններ	16.9
4	ՏՀՏ, համակարգչային հմտություններ, ինտերնետ, նոր տեխնիկայի հետ աշխարհում	15.2
5	Դասագրքերի, ուսումնական ծրագրերի պարզաբանումներ	7.2
6	Դասը ներկայացնելու /մատուցելու նոր հմտություններ, մեթոդներ, խաղեր	5.6
7	Նոր հեղինակների, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների ծանոթացման դասընթացներ	5.1
8	Տեղեկություն գնահատման չափորոշիչների մասին	5.0

Գիտելիքներ եւ հմտություններ, որոնք կցանկանային ստանալ ուսուցիչները մասնագիտական

№	Գիտելիքներ եւ հմտություններ	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Դասապրոցեսի դիտարկում	4.3
2	Գործնական, լաբորատոր աշխատանքների ճիշտ կազմակերպում	4.3
3	Խմբային աշխատանքի վարում, երեխաների կառավարման հմտություններ	3.7
4	Դիդակտիկ նյութերի, ֆիլմերի, պրեզենտացիաների, ինտերակտիվ մեթոդների կիրառման հմտություններ	3.6
5	Փորձի փոխանակում	3.5
6	Գրավոր, թեսթային, թեմատիկ աշխատանքների անցկացման հմտություններ	3.1
7	Հոգեբանություն (տարիքային հոգեբանություն, շփման առանձնահատկություններ)	2.8
8	Վերապատրաստման ժամանակ դիդակտիկ նյութերի, ֆիլմերի կիրառում	2.0

Գիտելիքներ եւ հմտություններ, որոնք կցանկանային ստանալ ուսուցիչները մասնագիտական վերապատրաստման ընթացքում - 3

№	Գիտելիքներ եւ հմտություններ	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Ցանկացած նորամուծություն	1.9
2	Թեսթեր կազմելու հմտություններ	1.2
3	Այլ երկրների փորձի ուսումնասիրություն	1.0
4	Համակարգչով տարբեր առարկաների ծրագրերի պատրաստման հմտություններ	1.0
5	Ծրագրեր կոմպլեկտ դասարանների համար	1.0
6	Այլ	16.5
7	Ոչ մի կարիք	4.1

Մասնագիտական որակավորման բարձրացման հիմնախնդիրներն ըստ առաջնահերթության - 1


№	Մասնագիտական խնդիրներ	Առաջնահերթություններ				
		1	2	3	4	5
1	Դասաժամի հստակ պլանավորում եւ իրականացում	34.8	6.8	5.0	4.2	4.6
2	Գնահատման նոր չափորոշիչների կիրառություն	4.4	8.9	3.9	3.3	5.1
3	Դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառություն	8.2	16.9	10.3	6.2	7.0
4	Նոր նյութի, նորամուծության կիրառություն, թարմություն	5.6	11.6	9.3	7.4	6.2
5	Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրության առաջացում	16.9	15.6	17.2	10.7	8.1
6	ՏՀՏ արդյունավետ կիրառություն	2.8	4.1	6.3	6.3	4.8

Մասնագիտական որակավորման բարձրացման հիմնախնդիրներն ըստ առաջնահերթության - 2


№	Մասնագիտական խնդիրներ	Առաջնահերթություններ				
		1	2	3	4	5
7	Դասասենյակային պայմանների արդյունավետ օգտագործում	1.9	3.7	6.4	5.0	4.0
8	Աշակերտների հետ շփման հոգեբանական առանձնահատկություններ	5.8	8.5	11.0	13.3	9.7
9	Ուսուցչի խոսքի մշակույթ	1.9	3.8	5.7	8.1	6.6
10	Խմբային աշխատանքի վարման հմտություններ	2.0	4.2	7.0	9.7	9.9
11	Դասարանների նյութատեխնիկական հագեցվածություն	6.4	8.3	8.7	11.4	12.1
12	Նոր դասագրքերի, մասնագիտական գրականության առկայություն	8.7	6.5	6.2	8.8	15.7

Ուսուցիչների հմտությունների եւ գիտելիքների թարմացման անհրաժեշտությունը - 1


Հմտությունների եւ գիտելիքների թարմացման անհրաժեշտությունը




Ուսուցիչների՝ հմտությունների եւ գիտելիքների թարմացման անհրաժեշտությունը - 2



Մասնագիտական խնդիրների լուծումը վերապատրաստումից ստացած գիտելիքների շնորհիվ - 1



Մասնագիտական խնդիրների լուծումը վերապատրաստումից ստացած գիտելիքների շնորհիվ - 2



Դասավանդման առանձնահատուկ մոտեցումներ, որոնք պետք է կիրառել 6 տարեկան երեխաների հետ աշխատանքի մեջ

№	Առանձնահատուկ մոտեցումներ	Տեսակարար կշիռ, % տարրական դասարանների ուսուցիչներից
1	Տարիքային հոգեբանության առանձնահատկություններ	73.0
2	Հոգեբանական մտերմություն, հոգատարություն, ներողամտություն	29.9
3	Խաղերի, դիդակտիկ նյութերի, պաստառների, ինտերակտիվ մեթոդով ուսուցում	24.1
4	Խրախուսում, գովաբանում, ոգեւորում, կատարած աշխատանքի գնահատում	8.0
5	Դասարանային լավ, ճիշտ կահավորանք՝ համապատասխան երեխաների տարիքին	8.0
6	Խմբային ճիշտ աշխատանք	7.5
7	Խստություն, կարգապահություն, պատասխանատվության զարգացում	3.4
8	Շերտավոր ուսուցում	3.4

Վերապատրաստման դասընթացներ 6 տարեկան երեխաների դասապրոցեսն առավել արդյունավետ կազմակերպելու համար

№	Վերապատրաստման դասընթացներ	Տեսակարար կշիռ, % տարրական դասարանների ուսուցիչներից
1	Տարիքային հոգեբանություն	17.8
2	Խմբային աշխատանքներ, խաղերի կազմակերպման հմտություններ	16.3
3	Համակարգչային վերապատրաստում	11.9
4	6 տարեկանների հետ աշխատանքի ժամանակակից մեթոդներ	11.1
5	Ցանկացած դասընթաց նոր մեթոդների վերաբերյալ	9.6
6	Նյութը պարզ մատուցելու, դասընթացը մատչելի վարելու հմտություններ	7.4
7	Փորձի փոխանակում	6.7
8	Հայոց լեզվի եւ մաթեմատիկայի դասավանդման հմտություններ	5.9
9	Ծնողների հետ աշխատելու դասընթացներ	4.4
10	Երգի, պարի, կերպարվեստի, մարմնամարզության դասավանդման հմտություններ	3.7

Դասավանդման առանձնահատուկ մոտեցումներ, որոնք պետք է կիրառել ներառական կրթության համար

№	Առանձնահատուկ մոտեցումներ	Տեսակարար կշիռ, % ներառական կրթությամբ դպրոցների ուսուցիչներից
1	Հարգել, սիրել, վստահել	36.1
2	Առանձին ծրագրի մշակում, անհատական աշխատանք	11.5
3	Լրացուցիչ ժամերի դասավանդում	9.8
4	Պարզեցված դասագրքեր, թեմաներ	9.8
5	Կախված երեխայի առանձնահատկություններից՝ խմբային աշխատանք	8.2
6	Կապ հոգեբանի եւ ծնողների հետ	6.6
7	Հանդուրժողականություն, համբերատարություն	6.6
8	Դասի բազմաշերտ պլանավորում	6.6
9	Հավասար պայմաններ դասապրոցեսում	4.9
10	Աշխատել ունակություններին համապատասխան, ստուգել գիտելիքները	4.9

Վերապատրաստման դասընթացներ ներառական կրթությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար

№	Վերապատրաստման դասընթացներ	Տեսակարար կշիռ, % ներառական կրթությամբ դպրոցների ուսուցիչներից
1	Համագործակցային մեթոդներ	25.6
2	Հոգեբանություն	25.6
3	Խմբային աշխատանք, խաղերի մեթոդներ	20.9
4	Ծանոթացում հատուկ կարիքներով երեխաների հիվանդությունների առանձնահատկություններին	20.9
5	Նոր մեթոդների կիրառություն	18.6

Դասավանդման առանձնահատուկ մոտեցումներ, որոնք պետք է կիրառել կոմպլեկտ դասարանների համար


№	Առանձնահատուկ մոտեցումներ	Տեսակարար կշիռ, % կոմպլեկտ դասարանների ուսուցիչներից
1	Ժամանակի արդյունավետ օգտագործում	29.9
2	Խմբային աշխատանքներ	23.4
3	Անհատական աշխատանք, առանձին ծրագրերի մշակում	23.4
4	Հոգեբանական հմտություններ, տարիքային հոգեբանություն	22.1
5	Ժամանակակից մեթոդների կիրառում	9.1
6	Խաղային մեթոդներ	9.1
7	Համագործակցային մեթոդի կիրառում	3.9
8	Շատ աշխատանք ուսուցչի կողմից, աշխատանքային փորձ	3.9
9	Խիստ մոտեցում	2.6
10	Բնքնուրույն աշխատանքների հանձնարարում	2.6

Վերապատրաստման դասընթացներ կոմպլեկտ դասարանների կրթությունն արդյունավետ կազմակերպելու համար

№	Վերապատրաստման դասընթացներ	Տեսակարար կշիռ, % կոմպլեկտ դասարանների ուսուցիչներից
1	Դասընթաց հատուկ կոմպլեկտ դասարանների վերաբերյալ	46.8
2	Իրազեկում նոր մեթոդների մասին	17.7
3	Ուսումնական ծրագրերի կազմում, մշակում կոմպլեկտ դասարանների համար	12.9
4	Խմբային աշխատանքների արդյունավետ վարում	9.7
5	Ժամանակի կազմակերպում, կառավարում	6.5
6	Մասնագիտական վերապատրաստում	4.8
7	Նման դասարաններում դասի դիտարկում	3.2
8	Համակարգչային գիտելքներ	3.2

Ուսուցչի աշխատանքն ընտրելու շարժառիթը

Դրդապատճառներ



Ուսումնական հաստատություններում ստացած գիտելիքների եւ հմտությունների օգտակարությունն աշխատանքում

ԲՈՒՀ-ում ստացած անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների անհրաժեշտությունը




Ուսուցիչների ցանկությունը՝ առաջիկա տարիներին տնօրենի թափուր աշխատատեղի համար մրցույթին մասնակցելու եւ նախատեսված թեսթը հանձնելու համար

Ցանկությունը


■ Ոչ

■ Այո




Լավագույն տնօրենի հմտություններն ու գիտելիքներն ըստ ուսուցիչների

Լավագույն տնօրենի հմտություններն ու գիտելիքները




Աշխատանքի արդյունավետության բարձրացման գործոնների կարևորությունն ու ուսուցիչների բավարարվածությունը դրանցից

Աշխատանքի արդյունավետության գործոնների կարևորությունն ու բավարարվածությունը




Ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող գործոնները

Աշխատանքի արդյունավետության բարձրացման գործոնների կարեւորությունը




Աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող գործոնների առկայության աստիճանը

Գործոնների առկայության աստիճանը դպրոցում




Աշխատանքային եւ անձնական կյանքի համատեղումը



- Լիովին հաջողվում է համատեղումը
- Մասամբ է համատեղվում
- Չի համատեղվում

Մանկավարժների խորհուրդները բարձրագույն ուսումնական հաստատություններին կրթության որակի բարձրացման համար

№	Առաջարկներ	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Տեսկան ավելի ամուր գիտելիքներ	40.2
2	Գործնական գիտելիքների, պրակտիկայի ուժեղացում	34.5
3	Հոգեբանամանկավարժական հմտությունների զարգացում	33.0
4	Կրթության նոր մեթոդներին և տեխնոլոգիաներին ծանոթացում/մեթոդական դասընթացների քանակի ավելացում	30.0
5	Պատասխանատու վերաբերմունք աշխատանքին/որակյալ մասնագետների պատրաստում	23.5
6	Աջակցեն բարձրագույն կրթության որակի բարձրացմանը /ընդունելության քննությունները արդար, անաչառ գնահատում, կաշառակերության վերացում, որակյալ գիտելիք/	10.8
7	Մանկավարժի հոգեբանական որակներ	9.9
8	Որակյալ դասախոսների առկայություն/վերապատրաստում/բուհերի դասախոսները լավ տեղյակ լինեն դպրոցի համակարգից	7.2




4. ՏՀՏ կիրառությունը դպրոցում եւ դպրոցական ցանցը


Մասնակցությունը ՏՀՏ դասընթացներին

Մասնակցությունը

■ Չի մասնակցել ■ Մասնակցել է



Համակարգչի տիրապետելու կարողությունը դասընթացներին մասնակցած եւ չմասնակցած ուսուցիչների մոտ




Ուսուցիչների համակարգչային հմտությունները

Համակարգչային հմտություններ


- Բոլորովին չի տիրապետում
- Որոշ չափով տիրապետում է, սակայն չի կիրառում
- Որոշ չափով տիրապետում եւ կիրառում է
- Լիովին տիրապետում եւ կիրառում է

0% 20% 40% 60% 80% 100%



Դասավանդման պրոցեսում համակարգչին տիրապետող ուսուցիչների կողմից դրանց կիրառումը

Դասավանդման ընթացքում համակարգչի կիրառման հաճախությունը



- Որբեւէ չի կիրառել
- Հազվադեպ է կիրառում
- Հաճախակի է կիրառում
- Միշտ կիրառում է

Դասապրոցեսում համակարգչի կիրառման նպատակները

- Նյութի մատուցում/ պրեզենտացիա (69.2%)
- համացանցին միանալու եւ անհրաժեշտ նյութեր վերցնելու(37.0%)
- Հեռաուսուցման եւ աշակերտների հետ հաղորդակցության (7.4%)
- թեստեր կազմելու (69.2%),
- լաբորատորիայի (1.0%),
- փորձերի (1.0%)
- եւ այլն


Համացանցում հասանելի էլեկտրոնային նյութերից օգտվող ուսուցիչներ

Էլեկտրոնային նյութերից օգտվող ուսուցիչներ




Համակարգչային ծրագրեր, որոնք անհրաժեշտ է կիրառել դասավանդվող նյութն առավել մատչելի դարձնելու համար

Համակարգչային ուսուցման ծրագրեր




Դպրոցական ցանցի մասին տեղեկացվածությունը եւ դրա կիրառումը

Դպրոցական ցանցի կիրառությունը



Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի կիրառության անհրաժեշտությունը

Դպրոցական ցանցի անհրաժեշտությունը



- Անհրաժեշտ է եւ օգտակար
- Անհրաժեշտ եւ օգտակար չէ


Դպրոցների ինտերնետային ցանցի հնարավորությունները՝ ուսուցիչների աշխատանքում օգտակար լինելու համար

№	Օգտակարությունը	Տեսակարար կշիռ, % հարցվածներից
1	Առարկայի մասին նոր տեղեկություններ	74.5
2	Փորձի փոխանակում	23.6
3	Բոլոր դպրոցներում լինի լավ կապ/համակարգիչ	19.7
4	Դասավանդման նոր մեթոդների մասին ինֆորմացիա	17.2
5	Կրթության մասին օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն	8.2
6	Տեստերի նմուշների տեղադրում	8.0
7	Բարդ թեմաների մատչելի, մանրամասն ներկայացում	5.6
8	Գնահատականների տեղադրում	1.6
9	Ուսուցիչ-աշակերտ-ծնող կապի ապահովում	1.3

5. Մասնագիտական որակավորման համակարգ եւ ատեստավորում


Ատեստավորում անցած ուսուցիչների տեսակարար կշիռը

Ատեստավորում



- Ատեստավորում է անցել
- Ատեստավորում չի անցել


Ատեստավորում չանցնելու պատճառները



Տեղեկացվածությունը տարբերակված աշխատավարձի սանդղակի մասին


Տեղեկացվածությունը

■ Տեղեկացված է ■ Տեղեկացված չէ



Վերաբերմունքը աշխատավարձերի սանդղակի կիրառությանը

Վերաբերմունքը աշխատավարձերի սանդղակի կիրառությանը



Վերաբերմունքի պատճառները

Բացասական վերաբերմունքի պատճառները

- Աշխատավարձը կիջնի (39.8%)
- Սանդղակը սիսալ է հաշվարկված (36.5%)
- Բոլորը պետք է հավասար վարձատրվեն (22.7%)

Դրական վերաբերմունքի պատճառները


- Լավ ուսուցիչը պետք է լավ վարձատրվի (78.7%)
- Վարձատրությունը պետք է կախված լինի ստաժից (12.3%)
- Կիրթանի ինքնազարգացմանը (10.0%)
- Այդպես է որոշված պետության կողմից (3.8%)

Հաստիքների հաշվարկման սկզբունքներ

Աշխատավարձերի/ հաստիքների հաշվարկման սկզբունքները


■ Բոլորովին համաձայն չէ ■ Ավելի շուտ համաձայն չէ ■ Ավելի շուտ համաձայն է ■ Լիովին համաձայն է


0% 20% 40% 60% 80% 100%



Սկզբունքների կիրառության արդարությունը

Սկզբունքների կիրառության արդարության աստիճանը





6. Եզրակացություններ և առաջարկներ

Եզրակացություններ – 1

- Ուսուցիչները բավական տեղեկացված են հանրակրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների մասին: Դրան առաջին հերթին նպաստում են դպրոցի տնօրինության կողմից համապատասխան տեղեկատվության տրամադրումը եւ իրազեկումը: Նորությունների մասին տեղեկանալու հարցում զգալի դեր ունեն նաեւ վերապատրաստման դասընթացները, որոնց ընթացքում ուսուցիչները տեղեկանում են այդ նորարարություններին: ԶԼՄ-ներն ու կրթական ինտերնետային կայքերը տեղեկատվության հաջորդող աղբյուրներն են, ապա՝ մեթոդ-միավորման հանդիպումները, մասնագիտական ամսագրերն ու թերթերը, մեթոդական տետրերը, ինչպես նաեւ գործընկերները:
- Ուսուցիչների ճնշող մեծամասնությունը վերջին հինգ տարիներին մասնակցել է մասնագիտական վերապատրաստման դասընթացների, որոնք եղել են ամենատարբեր թեմաների եւ ուղղվածության: Սակայն գերակշռողը դասավանդման եւ գնահատման նոր մեթոդի կիրառումն է, դասավանդվող առարկայի վերապատրաստումը: Ավագ դպրոցին առնչվող բարեփոխումներն ու նորամուծությունները, դասագրքերի ու ծրագրային նյութերի ներկայացումը, ծրագրային ու կրթական փոփոխությունների, ՏՀՏ կիրառման մասին են եղել մյուս հիմնական վերապատրաստումների նպատակը:

Եզրակացություններ – 2

- Ընդհանուր առմամբ, ուսուցիչների կողմից շատ բարձր է գնահատվում վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը՝ թե մասնագիտական եւ թե նորարարական տեսանկյունից: Սակայն դասընթացների արդյունքում նորարարությունների մասին տեղեկանալը ավելի շատ օգտակար ու կիրառելի է համարվում, քան բուն մասնագիտական գիտելիքները:
- Վերապատրաստման դասընթացների բաղադրիչներից ուսուցիչների կողմից առավել դրական են գնահատվել վերապատրաստող մասնագետների կիրառական գիտելիքները, դասավանդման նոր մեթոդների մասին տեղեկատվության տրամադրումը, իմբային աշխատանքի վարման հմտությունները, նյութի պարզությունն ու մատչելիությունը, նյութի մատուցման ձևեր: Համեմատաբար բացասական են գնահատվել դասընթացի տեղողության կառավարումը, կրթական բարեփոխումների մատչելի ներկայացումը, նոր կրթակարգի մասին տեղեկատվության տրամադրումը, թեմաների կիրառման անհրաժեշտությունը:
- Վերապատրաստման դասընթացներից ուսուցիչների ամենամեծ դժգոհությունը վերապատրաստողների գիտելիքների, ու հմտությունների չտիրապետելն ու ոչ կոմպետենտ լինելն է: Հետևաբար՝ ուսուցիչների համար նման դասընթացը դիտարկվում է որպես ժամանակի անարդյունավետ անցկացում:

Եզրակացություններ – 3

- Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքներն ուսուցիչները հաճախ չեն կարողանում կիրառել եւ զարգացնել դպրոցում՝ համապատասխան պայմանների բացակայության պատճառով: Ուսուցիչների կողմից առավել բացասական են գնահատվել դպրոցի նյութատեխնիկական պայմանները, համակարգչային լսարանի հագեցվածությունը եւ դասասենյակների հարմարավետությունը: Դպրոցի տնօրինության կողմից աջակցությունն ամենադրականն է գնահատվել:
- Վերապատրաստման դասընթացների մասնակցելու ցանկության բացակայությունը շատ հաճախ հենց պայմանավորվում է դասընթացների արդյունքում ստացած գիտելիքների ու հմտությունների կիրառման անհնարինությամբ կամ շատ հազվադեպ կիրառմամբ:
- Ուսուցիչների մեծ մասը (74.7%) նախկինում վերապատրաստման դասընթացների հետ կապված ոչ մի դժվարություն չի ունեցել: Մյուսները որպես դժվարություն առաջին հերթին նշել են ժամանակի սղությունն ու դասընթացի անցկացման ուշ ժամը, ապա՝ հեռավորությունն ու ճանապարհի դժվարությունները: Դժվարություններ են հարուցում նաեւ անձնական խնդիրները եւ դասընթացի անարդյունավետությունը՝ նյութերի ոչ մատչելի մատուցումը:

Եզրակացություններ – 4

- Տեղեկացված լինելով, որ ուսուցիչների վերապատրաստումը դառնալու է պարտադիր՝ մոտ հինգ տարին մեկ հաճախականությամբ, ուսուցիչների մեծ մասը վերապատրաստման մասնակցության ցանկություն է հայտնել:
- Ուսուցիչների համար, սակայն, վերապատրաստումը միշտ չէ, որ հարմար է ժամանակի եւ տեւողության առումով: Ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ամենանախընտրելի հաճախականությունը տարին մեկ անգամն է: Ամենահարմար ամիսը հունիսն է, տեւողությունը՝ մեկ շաբաթը, նախընտրելի ժամերը՝ առավոտյան եւ կեսօրին: Խիստ անընդունելի են երեկոյան դասընթացները:
- Մանկավարժները գիտելիքների եւ հմտությունների բավականին բացմազան կարիքներ ունեն, որոնք կցանկանային լրացնել մասնակցելով վերապատրաստման դասընթացների: Ամենաշատը նշվել է նոր մեթոդների ու հմտությունների պահանջը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը, նոր մեթոդների կիրառմանը հմտությունները, դասագրքերի, ուսումնական ծրագրերի պարզաբանումները, դասը մատուցելու նոր հմտությունները եւ այլն:

Եզրակացություններ – 5

- Մասնագիտական հիմնախնդիրներից ուսուցիչներն առաջնահերթ են համարել դասաժամի հստակ պլանավորումն ու իրականացումը, ապա՝ աշակերտի մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրության առաջացումը, նոր դասագրքերի, մասնագիտական գրականության առկայությունը, դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառությունը, դասարանների նյութատեխնիկական հագեցվածությունը:
- Ուսուցիչները գիտելիքների եւ հմտությունների թարմացման անհրաժեշտություն են զգում, հատկապես՝ ՏՀՏ կիրառման, աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրության առաջացման, աշակերտների հետ շփման հոգեբանական առանձնահատկությունների, նոր նյութերի, նորամուծությունների կիրառման:
- Մասնագիտական վերապատարստումից ստացած գիտելիքների շնորհիվ ուսուցիչներն ամենաքիչ հնարավորն են համարում դասասենյակային պայմանների արդյունավետ օգտագործումը, ուսուցչի խոսքի մշակույթն ու աշակերտների հետ շփման առանձնահատկությունները, աշակերտի մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրության առաջացումը, ՏՀՏ կիրառությունը:

Եզրակացություններ – 6

- Հարցված ուսուցիչների մոտ կեսը մասնագիտության ընտրության հարցում ամենակարևոր դրդապատճառ է համարում երեխաների հետ շփումը: Հիմնավոր պատճառների մեջ է նաև իր կողմից դասավանդվող առարկայի հանդեպ սերը և երեխաներին կրթելը:
- Ուսումնական հաստատություններում ստացած գիտելիքները, հատկապես կիրառական և գործնական հմտությունները, հաճախ կիրառելի և օգտակար չեն լինում մանկավարժի աշխատանքային գործունեության մեջ: Ուսուցիչներն առավելապես նշել են, որ ԲՈՒՀ-ում չեն սովորել ՏՀՏ օգտագործման հմտություններ և դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառություն: Նույնիսկ նշյալ հմտությունները սովորած ուսուցիչներն այն անօգուտ են համարել աշխատանքում դրանց կիրառության տեսանկյունից: Ուսումնական հաստատություններում ստացած գիտելիքներից աշխատանքի մեջ կիրառելու համար ամենաօգտակարն է առարկայի մասին տեղեկացվածությունը, առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու հմտությունները, նյութի պարզ ու մատչելի ներկայացման հմտությունները, աշակերտների հետ շփման և նրանց գիտելիքների գնահատման կարողությունները:

Եզրակացություններ – 7

- Ուսուցիչների ճնշող մեծամասնությունը (91.5%) ցանկություն չի հայտնել առաջիկա տարիներին լրացնել տնօրենի պաշտոնի համար նախատեսված հարցաշարը և մասնակցել տնօրենի թափուր աշխատատեղի մրցույթին: Ուսուցիչների մեծամասնությունն առաջին հերթին կարելորել են տնօրենի բարոյահոգեբանական առանձնահատկությունները, նոր միայն գիտելիքներն ու հմտությունները, որոնցից առաջին տեղում է բազմակողմանի զարգացած լինելը, ապա ղեկավարման հմտությունները, շփման կարողությունները: Կարելորվել է նաեւ մանկավարժական փորձը և օրենքների իմացությունը: Ամենաչպահանջվածը օտար լեզուների ու համակարգչի իմացությունն և լավ տնտեսվար լինելն է:
- Աշխատանքի արդյունավետության բարձրացման համար մանկավարժները կարևորում են մի շարք գործոններ, որոնց առկայությունն իրենց դպրոցում այդքան էլ չի գոհացնում նրանց: Դրանք են՝ նյութական, ֆինանսական խթանման համակարգը, աշխատանքային պայմանները, նոր գաղափարների փորձարկման հնարավորությունները, դպրոցի նյութատեխնիկական հագեցվածությունը, նորամուծությունների կիրառումը:

Եզրակացություններ – 8

- Հարցմանը մասնակցած ուսուցիչների կեսից ավելին (56.1%) չի մասնակցել ՏՀՏ վերապատրաստման դասընթացների: Նրանց 19.6% -ն ընդհանրապես չի տիրապետում համակարգչին: Ընդ որում համակարգչին չեն տիրապետում նաև դասընթացներին մասնակցած ուսուցիչների մի մասը: Դասընթացներին մասնակցած ուսուցիչների ընդհանուր ՏՀՏ գիտելիքներն ավելի բարձր են, սակայն այդ դասընթացներին մասնակցությունն ամբողջությամբ չի լուծել նրանց համակարգչին տիրապետելու հմտությունների կարիքը: Մյուս կողմից դպրոցում չկան համապատասխան պայմաններ վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքների իրացման համար: Համակարգչին տիրապետող ուսուցիչների 27.9%-ը երբեւէ չի կիրառել համակարգիչ դասավանդման պրոցեսում:
- Դպրոցների ինտերնետային ցանցի մասին լիովին տեղեկացված է և կիրառում է ուսուցիչների 7.1%-ը, լիովին տեղեկացված է, սակայն չի կիրառում նրանց 10.7%-ը, որոշ չափով տեղեկացված է և կիրառում է 18.1%-ը, որոշ չափով տեղեկացված է, սակայն չի կիրառում 47.1%-ը: 17.0%-ը բոլորովին տեղեկացված չէ դպրոցական ցանցի մասին: Ուսուցիչների մեծամասնությունը (85.9%) շատ անհրաժեշտ և օգտակար է համարում Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի կիրառությունը:

Եզրակացություններ – 9

- Իրենց աշխատանքային գործունեության ընթացքում ատեստավորում են անցել հարցված ուսուցիչների 34.2%-ը: Տարբերակված աշխատավարձերի սանդղակի մասին տեղեկացված է հարցված մանկավարժների 64.5%-ը: Նրանցից մեծ մասը (տեղեկացվածների 71.2%-ը), ընդհանուր առմամբ, դրական է վերաբերվում այդ սանդղակի ներդրմանը: Բացասական վերաբերմունքի հիմնական պատճառները աշխատավարձն է, սանդղակի հաշվարկման սկզբունքները եւ անհավասարությունը:
- Աշխատավարձերի ու հաստիքների հաշվարկման ժամանակ ուսուցիչներին առավելապես համաձայն են կիրառելու հետեւյալ սկզբունքները. կրթական աստիճանը, աշխատանքային ստաժը, դասաժամերի քանակը, դասղեկությունը, մեթոդ-միավորման նախագահությունը: Հակառակը՝ առավելապես անհամաձայն են հետեւյալ սկզբունքների հետ. Դասարանում աշակերտների թիվ, աշակերտների կողմից տրված գնահատական, ատեստավորում անցնելու փաստ, մասնակցություն վերապատրաստման դասընթացներին եւ այլն:

Եզրակացություններ – 10

- Ուսուցիչների կողմից շատ ավելի արդյունավետ է գնահատվել մեկ ընդհանուր հոսքով ավագ դպրոցն ի համեմատություն առանձին գործող ավագ դպրոցի:
- Ուսուցիչներն, ովքեր աշխատում են գյուղական համայնքների միակ միջնակարգ դպրոցներում, գնահատել են մեկ ընդհանուր հոսքով գործող ավագ դպրոցի որակի համապատասխանությունը առանձին գործող ավագ դպրոցի մակարդակին:
- Ուսուցիչներն առանձնացրել են ավելի շատ թերություններ, որոնք ունեն ավագ դպրոցներն ընդհանուր հոսքով դպրոցների համեմատությամբ, քան առավելությունները:



ՄԱՍ 2

1. Դպրոցների տնօրենների կարծիքները ուսուցիչների եւ տնօրենների վերապատրաստման մասին

Կարծիքներ տնօրենի պաշտոնի համար նախատեսված հարցաշարի վերաբերյալ

Գրեթե բոլոր տնօրենները միակարծիք են հարցաշարի բարդության, խրթինության, ոչ միանշանակության եւ նման միջոցով տնօրեն նշանակելու մեխանիզմի մասին:

Հարցաշարում շեշտադրված են առավելապես օրենքների իմացությունն ու իրավաբանական մոտեցումներ, որոնք, եթե նույնիսկ հնարավոր լինի հանձնել, ապա բոլորովին չեն բացահայտում լավ տնօրեն լինելու կարողությունները:

Թեսթի մեջ շեշտադրում չկա մանկավարժական, հոգեբանական, երեխաների, ուսուցիչների ու ծնողների հետ շփման կարողությունների, ղեկավարման հմտությունների վրա:

Թեսթի հարցաշարն առավելապես անգիր սովորելու համար է: Ոչ մի տնօրեն չի կարող եւ պարտավոր չէ նման պատրաստվածություն ունենա: Հարկ եղած դեպքում տնօրենը կարող է վերհիշել աշխատանքային եւ այլ օրենսգրքեր:

Հարցաշարի բարդությունը եւ ոչ համապատասխան հարցերը առաջացնում են տնօրենի նշանակման նոր կոռուպցիոն ռիսկեր:


Տնօրենի նշանակման այլընտրանքային տարբերակներ

Իրավիճակային լուծումներ պահանջող հարցերով հարցաշար է անհրաժեշտ: Ինչպես նաև նախկին աշխատանքի գնահատում: Տրամաբանական հարցերով հարցաշարը, հարցազրույցը եւ նախկին աշխատանքային փորձը ավելի լավ կբացահայտի համապատասխան տնօրենին, քան ներկա հարցաշարը:

Վերադասը չնչին ազդեցություն պետք է ունենա ընտրման գործընթացում: Ընտրությունը պետք է կատարեն մանկավարժական, ծնողական եւ աշակետական կոլեկտիվները:

Տնօրինության սահմանված 5 տարին քիչ է: Մրցույթը կարելի է սահմանել միայն թափուր տեղերի համար: Երկարատեւ աշխատած տնօրենները չպետք է հանձնեն որևէ քննություն: Նրանց փորձն արդեն շատ մեծ է:

Նախարարության կողմից կոմպետենտ եւ օբյեկտիվ հանձնաժողովի ստեղծում, որը կընտրի տնօրենին: Ընտրության հարցում անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ. մանկավարժի աշխատանքային փորձ, հոգեբանական գիտելիքներ, կառավարման հմտություններ, աշխատակազմի մեջ ընդունված լինելու հանգամանք եւ այլն:



3. Եզրակացություններ և առաջարկներ

Եզրակացություններ և առաջարկություններ

- Դպրոցների տնօրենները միանշանակ կողմ են ուսուցիչների մասնագիտական վերապատրաստմանն ու շարունակական զարգացմանը: Սակայն նրանք մի շարք մտահոգություններ ունեն դասընթացներին մասնակցելու արդյունավետության հետ կապված:
- Տնօրենները նույնպես վերապատրաստման կարիքներ ունեն՝ բարելավելու իրենց կառավարչական հմտությունները, Ֆինանսական գործերի վարման կարողությունները, աշխատանքային օրենսգիրքը, հոգեբանական մի շարք հմտություններ, նոր մեթոդներ, ՏՀՏ հմտություններ, աշակերտների, ծնողների եւ ուսուցիչների հետ աշխատելու մոտեցումներ
- Տնօրենի պաշտոնի համար նախատեսված հարցաշարը համարվում է բավականին խրթին, ոչ դպրոցի տնօրենի համար նախատեսված, իսկ նման ձեւով տնօրենի նշանակումը՝ կոռուպցիոն ռիսկեր պարունակող, դպրոցի տնօրենից պահանջվող հմտություններն ու գիտելիքները չբացահայտող: